«Հաստատում եմ»

Հայաստանի շախմատային ֆեդերացիայի

նախագահի առաջին տեղակալ՝ **Ս.Լպուտյան**

«04» « մարտի » 2021թ.

Հայաստանի պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարը կանցկացվի Հայաստանի շախմատի ակադեմիայում (հասցե՝ Շևչենկո 34, ք. Երևան, ՀՀ) ս/թ. մարտի 20-ից 29-ը:

Մրցաշարն անցկացվում է հետևյալ տարիքային խմբերով.

ա) մինչև 8 տարեկան (2012 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) պատանիներ

բ) մինչև 10 տարեկան (2010 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) պատանիներ

գ) մինչև 12 տարեկան (2008 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) պատանիներ

դ) մինչև 14 տարեկան (2006 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) պատանիներ

ե) մինչև 16 տարեկան (2004 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) պատանիներ

զ) մինչև 18 տարեկան (2002 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) պատանիներ

Տեղեկացնում ենք, որ մինչև 16 (Երևանից 14 շախմատիստ) և 18 (առնվազն 2050 ազգային վարկանիշ) տարեկան պատանիների առաջնության մրցաշարերում մասնակցելու են հանրապետության մարզերի, ինչպես նաև Երևանի պատանի շախմատիստները:

Մրցաշարն անցկացվում է ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների համաձայն, շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով: զ (մինչև 18 տարեկան պատանիներ) մրցաշարը, մասնակիցների քիչ քանակի դեպքում, հնարավոր է անցկացնել նաև շրջանային մրցակարգով:

Հավասար միավորներ վաստակելու դեպքում բոլոր մրցաշարերում տեղերը կորոշվեն ըստ.

1. հատված Բուխհոլց - 1 ցուցանիշի
2. գումարային Բուխհոլցի ցուցանիշի
3. սև գույնով խաղացած պարտիաների առավելագույն քանակի
4. հաղթանակների առավելագույն քանակի

Ժամակարգը՝ յուրաքանչյուր մասնակցի տրվում է 90-ական րոպե առաջին 40 քայլի համար, այնուհետև 15 րոպե մինչև պարտիայի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

<u>Հայաստանի առաջնության ուղեգրեր:</u> Հայաստանի պատանիների առաջնության եզրափակիչ փուլին մասնակցելու իրավունք կնվաճեն այն շախմատիստները, ովքեր իրենց տարիքային խմբերում կգրավեն հետևյալ տեղերը.

	Մինչև 8	**Մինչև 10**	**Մինչև 12**	**Մինչև 14**	**Մինչև 16**	**Մինչև 18**
Պատանիներ	1-4	1-5	1-4	1-3	1-6	1-5

Մրցաշարի բացումը՝ մարտի 20-ին ժամը 18:00–ին:

Խաղերի սկիզբը՝ մարտի 21-ից ամեն օր ժամը 15:00-ին:

- Խաղասկզբից ուշացման թույլատրելի ժամանակը սահմանվում է 30 րոպե:
- Խաղասրահ չի թույլատրվում ներկայանալ բջջային հեռախոսներով, հակառակ դեպքում խաղացողին կգրանցվի պարտություն:
- Մրցաշարի ընթացքում մարզերը ներկայացնող մասնակիցների և նրանց մարզիչների ծախսերը (ճանապարհածախս, հյուրանոց, օրապահիկ) հոգում է գործուղող կազմակերպությունը:

Հայտերի ընդունման վերջնաժամկետն է մարտի 15-ը: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 043 44 84 73 հեռախոսահամարով:

Մրցաշարի գլխավոր մրցավար՝ Վահագն Խաչատրյան